ՁԵԿՈՒՅՑ

Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն 02.06.2023 թ. և 21.06.2023 թ. այցերի վերաբերյալ

Բովանդակություն

Այցերի վերաբերյալ 3

Երեխաների մուտքը Կենտրոն 3

Գերբնակեցում 5

Երեխաների առողջության իրավունքը 8

Երեխաների նկատմամբ վերաբերմունքը 12

Առաջարկություններ 21

Այցերի վերաբերյալ

Դիտորդական խմբի անդամներ Մարիետա Թեմուրյանը («Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ), Կարինե Դավթյանը («Կանանց իրավունքների տուն» ՀԿ) և Քրիստինա Բաղդասարյանը («Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ) 2023 թ. հունիսի 2-ին և հունիսի 21-ին չհայտարարված այցեր են կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կենտրոն):

2023 թ. հունիսի 2-ի այցի նպատակն է եղել գնահատել Կենտրոնում երեխաների իրավունքների վիճակը և ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջարկություններ: Հունիսի 21-ին այցն իրականացվել է նախորդ այցի ընթացքում բացահայտված խնդիրների հավաստիությունը վերստուգելու, ինչպես նաև պարզելու, թե Խմբի բարձրացրած խնդիրների լուծմանն ուղղված ինչ միջոցներ են ձեռնարկվել:

Այցերի ընթացքում Խմբի անդամներն իրականացրել են ընդհանուր դիտարկում, առանձնազրույցներ ունեցել Կենտրոնի սաների և աշխատողների հետ: 2023 թ. հունիսի 2-ին Կենտրոնում շուրջօրյա խնամք էր ստանում 54 երեխա (29 տղա և 25 աղջիկ), հունիսի 21-ին՝ 55 (29 տղա և 26 աղջիկ): Տղաներից երկուսը 20 տարեկան են:

Երեխաների մուտքը Կենտրոն

Ըստ երեխաներից մեկի՝ ինքը Կենտրոն ընդունվելիս չի տեղեկացվել, թե որքան է Կենտրոնում մնալու առավելագույն ժամկետը և որ հնարավոր է Կենտրոնից տեղափոխվի խնամքի այլ հաստատություն:

Երեխան այցի պահին հուզական վատ վիճակում էր, սրտնեղում էր, որ տուն վերադառնալու փոխարեն պետք է տեղափոխվի Գավառի մանկատուն՝ մորից

հեռու: Տվյալ դեպքում այս ընտանիքի երեխաների տեղափոխումը այլ մարզ հանգեցնելու էր նաև մոր կողմից երեխաներին տեսակցելու խոչընդոտմանը:

Այցի ընթացքում աշխատակազմի որոշ ներկայացուցիչներ վրդովմունք են հայտնել այս ընտանիքի վերամիավորման արգելքի վերաբերյալ՝ նշելով, որ երեխաների և ծնողի միջև հուզական կապը բարձր է, իսկ ծնողի հետ վերամիավորվելու միակ խոչընդոտը վերջինիս մաքրասեր չլինելն է և վարձով բնակվելը: Ընդ որում սոցիալական աշխատողի կողմից իրականացված մեկ պատահական և մեկ նախապես տեղեկացրած այցերի ընթացքում բնակարանը եղել է կոկիկ վիճակում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Երեխաների մուտքը կենտրոն տեղի է ունենում ոստիկանության, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հանձնաժողովի ներկայացուցչի, ՄՍԾՏԿ ներկայացուցիչների ուղեկցությամբ, երբ վերջինները ճգնաժամային իրավիճակում հայտնաբերում և տեղափոխում են երեխային: Հաստատություն մուտք գործելիս երեխաները գտնվում են սթրեսային իրավիճակում հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախ պատճառից՝ ընտանիքից, սոցիալական ծանոթ միջավայրից բաժանումն ինքնին սթրեսային է: Հաստատություն մուտք գործելուց հետո բազմամասնագիտական թիմն իրականացնում է առաջնային գնահատում և ըստ կարիքի անմիջապես ձեռնամուխ է լինում հրատապ գործողությունների իրականացման, որից հետո նոր միայն համալիր գնահատման արդյունքները հաշվի առնելով՝ կազմվում է անհատական սոցիալական ծրագիր: Հրատապ գործողությունների թվում, երեխայի տարիքին, կարիքին, հասունության մակարդակին համապատասխան ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում տվյալ կենտրոնում գտնվելու կարևորությունն ու նպատակահարմարությունը:

Ճգնաժամային աջակցության կենտրոնում երեխաների խնամքը կազմակերպվում է ժամանակավորապես՝ մինչև երեխայի շահից բխող խնամքի

եղանակի որոշումը: Այդ գործընթացում առաջնային է դիտվում ընտանիքի հետ վերամիավորումը: Ներկայում կազմակերպությունը համագործակցում է երկու գործընկեր այլ կազմակերպությունների հետ, որոնք 2023 թվականի հունվարից ի վեր աջակցում են երեխաների և ընտանիքների վերամիավորմանը:

Երբեմն լինում են դեպքեր, երբ երեխայի շահից չի բխում տվյալ ժամանակահատվածում ընտանիքի հետ վերամիավորումը և մասնագիտական եզրակացության հիման վրա՝ երեխան անցնում է այլընտրանքային խնամքի այլ եղանակի: Այս ժամանակահատվածում ևս առաջին հերթին դիտարկվում է ընտանեկատիպ այլընտրանքային խնամքի անցման հնարավորությունը, սակայն եթե անգամ այդ տարբերակն է տվյալ ժամանակահատվածում դիտվում անհնարին՝ ապա երեխայի խնամքը կազմակերպվում է շուրջօրյա խնամքի հաստատությունում: Տվյալ պարագայում, առողջական խնդիրներ չունեցող երեխաների շուրջօրյա խնամքի կազմակերպման համար նախատեսված հաստատությունն, ինչպես հայտնի է, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ն է: Այնուամենայնիվ, շուրջօրյա երկարաժամկետ խնամքի հաստատությունում խնամք ստանալը ևս մշտապես վերանայման ենթակա է, ավելին, 2023 թվականի հունվարից ի վեր պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող հասարակական կազմակերպություններն աշխատանքներ են տանում իրենց գործունեության վայրում բնակվող ընտանիքների հետ՝ վերջիններիս երեխաներին վերամիավորելու նպատակով: Բոլոր գործընթացներում ակտիվ ներգրավվածություն ունեն երեխայի խնամքի կազմակերպման գործում ընդգրկված անձինք, երեխայի խնամքը ճգնաժամային բաղադրիչում կազմակերպելու դեպքում՝ նաև այդ հաստատության բազմամասնագիտական խմբի ներկայացուցիչները:

Գերբնակեցում

Դիտորդական խումբն արձանագրել է, որ հատկապես երեխաների տարիքային տարբերությունը և ոչ բավարար տարածքն դժվարեցնում են արժանապատիվ կեցության ապահովումը Կենտրոնում:

Աղջիկների և տղաների համար հատկացված են առանձին տարածքներ, սակայն բոլոր տարիքի նույն սեռի երեխաները նույն հարկի միևնույն մասնաբաժնում են: Այս հանգամանքը լուրջ խոչընդոտ է երեխաների համակեցության կանոնների պահպանման, քնի կամ հանգստի կազմակերպման հարցում:

Ննջասենյակներում անձնական տարածքը չի համապատասխանել սահմանված չափանիշներին (օրինակ՝ 8 մահճակալ մոտ 15 քմ սենյակում) (տե՛ս Նկար 1):

Նկար 1.



Աղջիկների ննջասենյակների դռները չեն փակվում: Աղջիկների հագնվելու կամ հագուստը փոխելու դեպքում տղաները և աշխատակիցները կարող են տեսնել նրանց դրսից, քանի որ և՛ տղաները, և՛ աշխատակիցները մշտապես անցուդարձ են կատարում աղջիկների ննջասենյակի մոտով: Նույնիսկ Խմբի անդամներն են այդ պատճառով ականատես դարձել աղջիկ երեխայի հագուստը փոխելուն:

Սա խախտում է անձնական տարածքի իրավունքը և առաջացնում ավելորդ լարվածություն: Երեխաները որպես այդպիսին զրկված էին անձնական տարածք ունենալու հնարավորությունից, նույնիսկ անհատական դարակներով ոչ բոլորն էին ապահովված: Ընդ որում դարակները չէին կողպվում կամ առհասարակ դուռ չունեին:

Աշխատակիցները ննջասենյակ մտնելիս դուռը չեն թակում:

Հունիսի 21-ին Կենտրոնի գույքը տեղափոխվում էր ժամանակավոր հատկացված տարածք, քանի որ նախատեսված է Կենտրոնի վերանորոգում: Թեև այսպիսով հնարավորություն է ստեղծվում անդրադառնալ գերբնակեցման խնդրին, այնուհանդերձ աշխատողները մտահոգ են, որ նույնիսկ վերանորոգման դեպքում գերբնակեցման, անձնական տարածքի և նաև համակեցության խնդիրները կարող են լուծում չստանալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Ճգնաժամային բաղադրիչով երեխաների խնամքի կազմակերպումը տվյալ շենքում իրականացվում է 2020 թվականից: Շենքային պայմանների բարելավման հարցը նախարարության համար առաջնային օրակարգային հարց է, որի նպատակով 2022 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությունը:

Ներկայում, երեխաների խնամքը ժամանակավորապես կազմակերպվում է այլ շենքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացված նախագծային աշխատանքների արդյունքում առաջիկայում մեկնարկելու են շինարարական աշխատանքները, որի արդյունքում, ըստ շենքային պայմանների հնարավորության՝ առավելագույնս կապահովվի երեխայազգայուն միջավայր: Զուգահեռաբար տարվում են աշխատանքներ շենքային պայմանների ընդլայնման նպատակով:

Շինարարական աշխատանքների կազմակերպումն ընթանում է գույքային հագեցման աշխատանքներին զուգահեռ:

Երեխաների առողջության իրավունքը

Կենտրոնին բուժպարագաների գնման համար տարեկան հատկացվում է 150.000 ՀՀ դրամ: Աշխատակցի տեղեկացմամբ՝ այդ գումարը թեև նախորդ տարվա համեմատ ավելացել է 30.000 դրամով, այնուամենայնիվ դեռևս բավարար չէ: Ըստ այդմ, որոշ դեղեր ծնողներն են ապահովում:

Բուժկետում ժամկետանց դեղորայք չի հայտնաբերվել, սակայն Խմբին մտահոգել է այն, որ առաջին օգտագործումից հետո հստակ ժամկետներ ունեցող դեղերի վրա առաջին օգտագործման օրվա վերաբերյալ նշում չի կատարվում: Հունիսի 2-ին Խումբն արձանագրել և մատնանշել է այս խնդիրը, սակայն հունիսի 21-ի այցի օրը ևս նշումները բացակայում էին:

Միջադիրի տրամադրման հարցում հակասական պատասխաններ են տրվել: Որոշ աղջիկներ և աշխատողներ նշել են, որ տրամադրվում է մեկ տուփ միջադիր: Որոշներն էլ նշել են, որ միջադիր առկա է բուժկետում և ըստ անհրաժեշտության օրական երկուական վերցնում են բուժանձնակազմից: Մտահոգիչ է, որ միջադիրը նախապես չի տրամադրվում և աղջիկները պետք է այն խնդրեն, երբ արդեն սկսվել է դաշտանը:

Հունիսի 21-ի այցի օրը բուժկետում առկա էր միայն ամենօրյա մի քանի միջադիր, որը նույն տոպրակում էր չօգտագործված սափրիչի հետ: Ամենօրյա միջադիրներն առանձին փաթեթավորմամբ չէին և չէր պահպանվում երեխաներին փոխանցման ժամանակ դրանց հիգիենան:

Աղջիկներից մեկը նշել է, որ հատկապես մի տեսակի միջադիրի (տե՛ս Նկար 2) որակը լավը չէ և հավելյալ խնդիրներ է առաջացնում:

Նկար 2.

Աշխատողները նշել են, որ երեխաների հետ խոսում են սեռական և վերարտադրողական առողջության պահպանման մասին: Բուժանձնակազմի, հոգեբանի տեղեկացմամբ մասնակցել են համապատասխան վերապատրաստման դասընթացների: Այնուհանդերձ, նրանք խուսափում են այնպիսի եզրույթների կիրառումից, ինչպիսին է դաշտանը, փոխարենը կիրառում՝ «ով խնդիր ունի», «հիվանդացել է»: Աշխատողներից մեկը նշել է վերապատրաստումների շարունակականության ապահովման, ինչպես նաև վերաբերելի տեղեկատվությամբ ձեռնարկների տրամադրման անհրաժեշտության մասին:

Ի հակասություն աշխատողների՝ աղջիկները տեղեկացրել են, որ սեռական և վերարտադրողական առողջության պահպանման մասին հաստատությունում չեն իրազեկվում: Նշել են, որ իմաստ էլ չկա աշխատողներին հարցեր տալ, քանի որ շատերը անտեսում են դրանք՝ մեկնաբանելով. «մեծ աղջիկներ եք ու արդեն պիտի տեղյակ լինեք այդ թեմաներից»: Աղջիկներից մեկը տեղեկացրել է, որ առաջին դաշտանի ժամանակ շատ է վախեցել, այդ մասին փորձել է հարցեր տալ հոգեբանին: Միջադիրի օգտագործումը սովորեցրել են կենտրոնի այլ աղջիկներ: Աշխատողներից մեկն էլ տեղեկացրել է, որ առաջին դաշտանի ժամանակ իրենք են աղջիկների հետ խոսում դաշտանի, հիգիենայի ապահովման մասին: Խմբի անդամների հարցին, թե ինչպես է ստացվում, որ տեղեկացված չեն լինում դաշտանային ցիկլի մասին, հայտնել է, որ տարիքով է պայմանավորված (օրինակ 11 տարեկան աղջկան դեռ տեղեկացրած չեն եղել, գուցե մտածելով, որ շուտ է):

Խնդրահարույց է անձնակազմի վերաբերմունքը երեխաների կողմից ձեռնաշարժությամբ զբաղվելուն: Կին աշխատողներից մեկը, օրինակ, նշել է, որ թեև վերջերս կարդացել է, որ ձեռնաշարժությամբ զբաղվելը նորմալ է, այնուհանդերձ ինքը գտնում է, որ ճիշտ չէ՝ «Պատահել է, որ նստել եմ կողքը, աղջկա ձեռքերը վերմակի վրա, մինչև քնի»:

Աշխատողներից մեկը տեղեկացրել է, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխաներից մեկը չի թաքցնում ձեռնաշարժությամբ զբաղվելը, ինչը նրա նկատմամբ այլ աշխատողների կողմից բացասական վերաբերմունքի պատճառ է:

Խմբին մտահոգել է որոշ աշխատողների հմտությունների պակասը ընտանեկան կամ սեռական բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցվելիս: Օրինակ՝ աշխատողներից մեկը սեռական բռնության ենթարկված մանկահասակ երեխայի մասին խոսելիս նշել է՝ «խիստ արգելեցի, որ խոսի ու հիշի դրա մասին»: Դիտորդների ներկայությամբ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների հետ խոսում են ոչ զգայուն եզրույթների կիրառմամբ, ինչպես նաև երեխաների ներկայությամբ խոսում են վերջիններիս ընտանեկան դրության մասին: Աշխատողներից մեկը տեղեկացրել է ընտանեկան բռնության ենթարկված երեխաների հետ աշխատելու հմտություններ սովորելու կարիքի մասին:

Որպես խնդիր մատնանշվել է երեք հոգեբաններին մեկ աշխատասենյակի տրամադրումը: Վերջիններս անհատական և խմբային աշխատանքներ են իրականացնում երեխաների և նրանց ընտանիքի անդամների հետ, և աշխատանքային բավարար պայմանների չապահովումը բացասաբար է անդրադառնում աշխատանքի արդյունավետության վրա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Կազմակերպությունում խնամվում են մոտ 60 երեխա և շահագործման ենթակա դեղերը բացելուց հետո սպառվում են անմիջապես, այնուամենայնիվ

հաստատությանը ևս մեկ անգամ զգուշացվել է խստորեն հետևելու նշագրումների իրականացմանը:

Միջադիրները տնտեսուհու կողմից տրվում են մեծ աղջիկներին ամիսը մեկ անգամ, ինչպես նաև բուժկետում առկա է մշտապես՝ պատահական դաշտանային ցիկլի դեպքում օգտագործելու համար: Ուստի դիտորդական խմբի արձանագրվածը չի համապատասխանում իրականությանը:

Բուժկետում ընդհանուր տուփի մեջ առկա են եղել ամենօրյա միջադիրներ, որոնք երեխաների կողմից չեն օգտագործվում: Սափրիչները եղել են փակ տուփով:

Միջադիրի որակի հետ կապված՝ աղջիկների կողմից ոչ մի բողոք չի եղել:

Սեռական և վերարտադրողական առողջության պահպանման, դաշտանային ցիկլի, ինչպես նաև արտաքին սեռական օրգանները խնամելու և մշտապես անձնական հիգիենային հետևելու մասին բուժանձնակազմի և հոգեբանների կողմից բազմիցս անցկացվել են զրույցներ: Բոլոր երեխաներին էլ տեղեկացված են:

Որոշակի տարիքում ձեռնաշարժությունը (մաստուրբացիան) բնական երևույթ է, քանի որ արտադրվում են սեռական բջիջներ և գրգիռ է առաջանում, սակայն պետք է հետևողական լինել, շեղել երեխայի ուշադրությունը, քանի որ դա կտանի օնանիզմի, որը լուրջ հիվանդություն է: Աշխատակիցների բացասական վերաբերմունքը չի խրախուսվում այդ դեպքերում և կանխարգելումը լինում է շատ նրբանկատ ձևով, առանց երեխային ցավ պատճառելու կամ հոգեկան ճնշում գործադրելու:

Բռնության ենթարկված 7 տարեկան երեխային կազմակերպության աշխատակիցը խորհուրդ է տվել չհիշել և չխոսել այդ մասին, քանի որ նա դա արել է փողոցային բառապաշարով և խոսել ու պատմել է բոլոր երեխաներին, իսկ զգուշացումը կատարվել է շատ նուրբ ձևով և առանձին: Հիմա երեխան այդ աշխատողին վերաբերվում է հարազատի պես: Սեռական բռնության ենթարկված

երեխաների հետ աշխատելու հմտությունները զարգացնելը կարևոր է, նշված թեմաներով պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ:

Երեխաների նկատմամբ վերաբերմունքը

Խումբն արձանագրել է Կենտրոնում երեխաների դաստիարակության հարցում մտահոգիչ մեթոդների կիրառում՝ բղավել, հրել: Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին այս մասին հայտնելուց հետո, վերջինս տեղեկացրել է, որ դայակների և դաստիարակների շարունակական վերապատրաստման անհրաժեշտություն կա՝ ավելացնելով, որ բոլոր աշխատողները սրտացավ են:

Հարցվող երեխաների տեղեկացմամբ՝ աշխատողները երեխաների վրա գոռգոռում են, վիրավորական և կոպիտ արտահայտություններ թույլ տալիս, ինչպիսիք են՝ «ձևեր մի բանցրա», «գիժ է», «լավ աղջիկ չէ», թիրախավորում ծնողներին: Հարցվողներից մեկն անձամբ է լսել, թե ինչպես են աշխատակիցներն իր մասին խոսում, նշում, որ ինքը գիժ է: «Մեզ դիմում են աղջի, չիչո բառերով, երբ ասում ենք, որ դուր չի գալիս նման դիմելաձևը, ասում են՝ կատակ ենք անում», «Իրենց տան երեխեքի հետ էսպե՞ս են վարվում, էս պահին, որ մեր ծնողները մեր կողքին չեն, չի նշանակում, որ մեզ հետ կարելի է էսպես վարվել», «Շատ են վիրավորում, որ բացատրեն կհասկանանք, բայց որ խփում ու զայրանում են, ես դրանից ավելի եմ կատաղում ու ագրեսիվանում», «ասում են՝ խաղալիքները մո՞րդ տնից ես բերել, թե հորդ, թանկարժեք է, կջարդե՛ս: Էդ խաղալի՞քն է կարևոր, թե երեխեն»,- նշում են երեխաները:

Հարկ է նշել, որ աշխատողներից մեկը տեղեկացրել է, որ երբ բարձր տոնայնությամբ են խոսում, հետո կատակի են տալիս, որպեսզի իրավիճակը հարթվի:

Երեխաներից նշել են, որ դայակների և դաստիարակների կողմից հատկապես նկատելի վատ վերաբերմունք է առկա մտավոր խնդիրներ ունեցող երեխայի նկատմամբ: Երեխաներից մեկը նշում է, որ աշխատողներն ասում են՝

«Հոգեբուժարանի հիվանդ է, թուղթ ունի, որից հետո երեխան ավելի ագրեսիվ է դառնում»:

Երեխաները տեղեկացրել են նաև ֆիզիկական բռնության մասին՝ «Խփել են գլխին, գլուխը խփել պատին, մինչև հիմա լացի ձայնն ականջներումս է», «Պետությունը որ իմանա էստեղ ինչ է կատարվում, գիտե՞ք ինչ կանի»:

Առաջին այցի ընթացքում Խմբի անդամներն ականատես են եղել պահակի կողմից երեխաներից մեկի թևից բռնելու ու բարձր բղավելու տեսարանին:

Հունիսի 21-ի այցի ընթացքում որոշ երեխաներ հայտնել են, որ Խմբի նախորդ այցից հետո աշխատակազմի վերաբերմունքը դրական փոփոխության է ենթարկվել: Միևնույն ժամանակ որոշ երեխաներ էլ հայտնել են շարունակվող բռնությունների մասին:

Աշխատողներն ունեն երեխաներին պատժելու իրենց մեթոդները: Նրանցից մեկն ասում է, որ ժամանակին իրեն սովորեցրել են, որ «ինչով ուզում եք պատժեք, բայց ոչ հացից զրկելով»: Մինչդեռ երեխաները փաստել են, որ երբ անկարգություն են անում, երբեմն պատժվում են և զրկվում հաց ուտելու հնարավորությունից, թեև հետո թույլ են տալիս: Երեխաներից երկուսը տեղեկացրել են, որ մեկ անգամ իրենք ևս պատժվել են ու զրկվել հաց ուտելուց, սակայն մեկ ժամ անց աննկատ գնացել են ու թաքուն հաց կերել:

Մեկ այլ աշխատող նշել է. «Անշնորհք բաներ որ անում են, օրինակ՝ ամբողջ պահարանը թափում է գետնին, ասում ենք՝ ուրեմն դու պիտի դասավորես: Եթե մեզ դեռ դուր չի գալիս, նորից ենք ասում՝ դասավորի»:

Խմբի անդամը լսել է, թե ինչպես է աշխատողը երեխային ասում՝ «ով չքնեց, բակ գնալուց կզրկվի»:

Այս ամենն ակնհայտորեն խաթարում է երեխաների հուզական աշխարհի կայունությունն ու անդորրը, ինչպես նաև տարատեսակ տրավմաների և ճնշվածության զգացողություններ առաջացնում:

Միևնույն ժամանակ, երեխաներից մեկի պնդմամբ ամեն ինչ հրաշալի էր, քանի որ համեմատում էր նախկինում այլ խնամքի տան հետ: Վերջինիս տեղեկացմամբ՝ այնտեղ սարսափելի էր, ծնկի իջեցնելով էին պատժում՝ ոտքերի տակ ջուր լցնելով, իսկ այստեղ այդ ամենը չկա: Ըստ նրա՝ ինչ էլ որ լինում է, երեխաների չարության պատճառով է: Վերջինս Խմբի անդամի հետ զրույցից հետո բոլոր աշխատողներին գրկախառնությամբ էր ողջունում, ինչը բնորոշ չէր մյուս երեխաներին:

Երեխաները ներգրավված են մաքրության աշխատանքներին: Ընդ որում միայն աղջիկներն են ներգրավված՝ մոտ տասը տարեկանից, ինչը պայմանավորված է նրանց սեռով: Աշխատողներից մեկը նշում է, որ «տեսնում ենք՝ չեն կարողանում լավ ավլել, վերցնում ենք ձեռքից, ցույց ենք տալիս», որ աղջիկները օգնում են անկողնային սպիտակեղենը փոխելիս, մինչդեռ տղաների դեպքում աշխատողներն են մեկը մյուսին օգնում, մյուսը նշում է, որ «սովորեցնում են մաքրություն անել, շատ հաճելի է, որ իրենք են անում»: Անձնակազմի մեկ այլ ներկայացուցիչ նշում է. «աղջիկներն ավելի վաղ են արթնանում, որ հարդարեն անկողինը, աղջիկներին սովորեցնում են, որ քնկոտ չլինեն, ի վերջո մեծանալու են, կին են դառնալու (նկատի ունի ամուսնանալու են), իսկ տղաները ինչքան ուզում է քնեն»: Մեկ այլ աշխատող տեղեկացրել է, որ «տղաներն ավելի լսող են, իսկ աղջիկները՝ կամակոր»:

Երեխաներից նույնպես նշել են, որ սենյակներում մաքրության իրականացման հերթապահություն է սահմանված, որը երեխաների միջանձնային հարաբերություններում լարվածություն է առաջացնում: Երեխաները ներգրավված են նաև կենտրոնում փոքրիկ երեխաներին քնեցնելու գործընթացում: Նշել են, որ իրենց քույրերին, եղբայրներին են քնեցնում՝ «փոքրիկները դայակներին չեն ենթարկվում, դրա համար ենք փորձում օգնել նրանց»:

Հունիսի 21-ին համեմատաբար մեծահասակ երեխաներն օգնում էին գույքի տեղափոխման և տարածքի մաքրության աշխատանքներում: Երեխաները նշել են, որ իրենց նախաձեռնությամբ են աջակցում:

Երեխաներից մեկն ինքնասպանության և փախուստի փորձեր է կատարել, որի մասին Կենտրոնում ոչ մեկը, ըստ Խմբին այս մասին հայտնող երեխայի, տեղյակ չէ: Մեկ անգամ փորձել է կախվել, մեկ այլ անգամ՝ պատուհանից նետվել: Երեխան տեղեկացրել է, որ եթե դաստիարակներն իմանան, շատ վատ կլինի:

Խիստ մտահոգիչ է, որ աշխատողները Խմբի անդամների հետ երեխաների մասին խոսում են երեխաների ներկայությամբ՝ ընդհանուր սենյակում, օգտագործելով ոչ զգայուն տերմիններ, առանց երեխայի/ների լսելու դեպքում կրկնակի տրավմայի ենթարկվելու մտավախության:

Աշխատողները կիրառում են խտրական բառապաշար՝ «ինվալիդ», «նորմալ երեխա», «անհասկացող», «դժվար երեխեք»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում մեծամասամբ խնամվում են բազմազավակ ընտանիքների երեխաներ՝ մինչև 3,4,5,6 անձ, որոնց միջանձնային հարաբերությունները միմյանց նկատմամբ շատ լարված են, երբեմն թշնամաբար են տրամադրված հարազատ քույրերի և եղբայրների նկատմամբ, որի պատճառով երբեմն հավելյալ ջանք է անհրաժեշտ ներդնել երեխաների միջև միջանձնային հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Դիտորդական խմբի կողմից արձանագրած այն փաստը, որ երեխաները պարտադրված են հարդարել իրենց անկողինները, մասնակցել մաքրության աշխատանքներին և քնեցնել փոքրերին՝ չի համապատասխանում իրականությանը: Ավագ խմբի երեխաները այս ամենը կատարում են իրենց նախաձեռնությամբ, ոչ մեկ չի պարտադրում նրանց, իսկ քնեցման գործընթացում իրենց մասնակցությունը պայմանավորված է ընտանիքում իրենց ունեցած սովորությունով, որ իրենց փոքր քրոջը կամ եղբորը պետք է քնեցնի նրանց ավագ քույրը կամ եղբայրը և դա բացառելը ևս սթրեսային վիճակի կարող է հանգեցնել և

շեշտել ինստիտուցիոնալ կառույցում գտնվելը: Այնուամենայնիվ, հարկ է ի նկատի ունենալ, որ հաստատությունը երեխաներին փոխանցում է նաև կենցաղավարման, ինքնուրույն կյանքի անցման հմտություններ, որտեղ կարևոր է անդրադարձ կատարել նաև սեփական տարածքի մաքրության պահպանմանը, ինչը երբևէ չի վերածվում շահագործման կամ պարտադրանքի:

Նախարարության կողմից շուրջ երկու ամիս է ինչ մեկնարկել է մեծածավալ վերապատրաստումների շարք՝ 600 մասնագետի ընդգրկմամբ, որոնց թվում ներառված են նաև սպասարկող անձնակազմի ներկայացուցիչները և որդեգրված քաղաքականության համաձայն՝ նմանօրինակ վերապատրաստումները լինելու են շարունակական:

Երեխաների կրթության և ժամանցի իրավունքը

Դիտորդական խմբին Կենտրոնի երեխաները ահազանգել են հանրակրթական դպրոցում իրենց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման վերաբերյալ:

Կենտրոնի երեխաների և նրանց դասընկերների միջանձնային հարաբերությունները լարված են: Դասընկերները ծաղրում և բուլինգի են ենթարկում ասելով՝ մանկատան երեխա կամ որբ:

Երեխաներից ահազանգել են հատկապես մտավոր խնդիրներ ունեցող երեխայի և Կենտրոնի աշխատողներից մեկի ընտանիքի անդամի, որը նույն դասարանում է սովորում, լարված հարաբերությունների մասին՝ նշելով, որ մատնանշվում է կենտրոնի երեխա լինելու, ծնող չունենալու փաստը:

Կենտրոնում առկա է նաև զբաղվածության ապահովման խնդիր: Աշխատողներից մեկը նշել է, որ մեծահասակ երեխաների ժամանցը չեն ապահովում, այլ զբաղեցնում են փոքրիկներին: Որոշ երեխաներ էլ դժգոհել են ամբողջ օրը միևնույն ֆիլմերն ու մուլտֆիլմերը դիտելուց:

Կենտրոնում գործում են խմբակներ՝ նկարչության, պարի, գորգագործության: Երեխաները, սակայն, ոչ միշտ են ցանկություն ունենում մասնակցել այս կամ այն խմբակի: Խմբին հայտնել են, որ նման դեպքերում աշխատողները պարտադրում են, այդ թվում՝ վախեցնելով, թե տնօրենին կտեղեկացնեն:

Երբ Խումբն այցերի ընթացքում գտնվել է երեխաների մասնաբաժնում, վերջիններս հեռուստացույց էին դիտում կամ հեռախոսով զբաղվում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Գաղտնիք չէ, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները գտնվում են հասարակության մեջ թիրախավորման, պիտակավորման բարձր ռիսկայնության գոտում, որի դրսևորումներից մեկն էլ կարող է լինել բուլլինգը:

Հարցի կարևորությունը նախարարության համար առաջնային է և 2022 թվականի տարեվերջից ի վեր, երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին կից ստեղծված կրթական հարցերով աշխատանքային խումբն իրականացրել է ուսումնասիրություններ, վեր հանել խնդիրներ և կազմել առաջարկություններ: Ս.թ. հուլիսի 14-ին տեղի ունեցած՝ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստի ընթացքում ներկայացվել է աշխատաքային խմբի կատարած աշխատանքները և որոշվել հետագա անելիքները: Այնուամենայնիվ, որպես միջանկյալ միջոցներ, ձեռնարկվում են մի շարք այլ միջոցառումներ՝ ինչպես օրինակ ուսումնական հաստատությունների և խնամքի հաստատությունների մասնագետների համատեղ վերապատրաստումներ, դեպքերի կանխարգելման շուրջ ընդլայնված մասնագիտական քննարկումներ և որ ամենակարևորն է՝ երեխաների մասնակցությամբ քննարկումներ:

Անդրադառնալով երեխաների զբաղվածության ապահովման խնդրին, հարկ է նշել, որ երեխաների ազատ ժամանցը կազմակերպվում է շատ բովանդակալից՝

խաղեր, զբոսանքներ, այցելություններ քաղաքի տեսարժան վայրեր, մասնակցություն տարաբնույթ մշակութային միջոցառումներին, իսկ ֆիլմերն ու մուլտֆիլմերը ընտրվում են իրենց ցանկությամբ: Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի հետ իրականացվում է սերտ համագործակցություն և պարբերաբար երեխաների կարիքին, նախասիրություններին համապատասխան՝ վերջիններս ընդգրկվում են տարբեր կենտրոններում: Տարվում են աշխատանքներ կենտրոնում գործող խմբակները բացառապես թերապեվտիկ բնույթով գործածելու, որը հնարավորություն կտա մնացյալ դեպքերում խմբակներ հաճախել հաստատությունից դուրս, ապահովելով նաև սոցիալականացումը և ինտեգրումը:

Հիգիենայի ապահովումը

Խումբն արձանագրել է երեխաների մասնաբաժիններում մաքրության խնդիր: Սենյակները փոշոտ են, առկա է տհաճ հոտ: Երեխաներն անխնամ են՝ կեղտոտ և պատառոտված հագուստով (Տե՛ս Նկար 3), երկար ու կեղտոտ եղունգներով: Թեև հունիսի 2-ի այցի ընթացքում արագ բացվել են լուսամուտները (ի դեպ միջանցիկ քամի էր), այնուամենայնիվ, տհաճ հոտը չէր անցնում:

Նկար 3.

Աղջիկների լոգասենյակում տաք ջուր միայն լողանալու օրն էր լինում: Երեկոյան հիգիենայի ապահովման նպատակով տղաների լոգասենյակից էին

դույլերով տաք ջուր վերցնում: Աղջիկները նշել են, որ լողանում են շաբաթական 1-2 անգամ՝ 10-15 րոպե տևողությամբ:

Աշխատողներից նշել են, որ երեխաներին պարտադիր աջակցում են լողանալիս: Նրանցից մեկը տեղեկացրել է, որ նույնիսկ եթե աղջիկը մեծ է, կարող է ինքնուրույն լողանալ ու չի ցանկանում, որ իրեն օգնեն, միևնույն է, օգնում են՝ «որ էդպես լողանան, չեն մաքրվի» (նկատի ունի առանց օգնության լողանալը): Նա նաև նշել է, որ տարիքով ավելի մեծ երեխաներն ամաչում են և լողանում ներքնազգեստով: Այս ամենը խոչընդոտում է երեխաների անձնական տարածքի իրավունքի իրացմանը:

Աղջիկներից ոմանք տեղեկացրել են, որ ըստ աշխատողների՝ դաշտանի ժամանակ լողանալ չի կարելի, վտանգավոր է տաք ջրի տակ երկար մնալը և իրենք միայն գլուխներն են լվանում:

Կենտրոնի սաները դժգոհել են շամպունի և օճառի որակից՝ նշելով, որ տհաճ հոտ ունեն և մազերը թեփոտվում են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Կենտրոնի վերանորոգման շրջանակներում առանցքային է համարվում նաև լողանալու համար անհրաժեշտ պայմանների մշտական ապահովումը: Կենտրոնին խստիվ զգուշացվել է լողանալիս աջակցության կարիք չունեցող (առողջական խնդրի, տարիքի կամ այլ հանգամանքի պատճառով) երեխաների համար ապահովել անձնական տարածք ունենալու իրավունքի իրացումը:

Ինչ վերաբերում է շամպունի և օճառի որակին և տհաճ հոտին, տարվել են շտկողական աշխատանքներ և երեխաները այսուհետ կստանան բուրավետ և ավելի որակյալ հիգիենիկ պարագաներ:

Վերապատրաստման հնարավորությունը

Կենտրոնի աշխատողները պարբերաբար վերապատրաստվում են Առողջապահության ազգային ինստիտուտի և հասարակական կազմակերպությունների կողմից: Այնուհանդերձ արդյունավետ վերապատրաստումների կարիքի մասին նշում է հարցվող աշխատողների մեծ մասը: Վերապատրաստումների անհրաժեշտությունը փաստում են նաև Խմբի կողմից բացահայտված խնդիրները:

Հարկ է նշել, որ Կենտրոնի աշխատողները առաջիկայում մասակցելու էին Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվող 5-օրյա վերապատրաստման դասընթացներին: Մտահոգիչ է, որ Գյումրի քաղաքի բնակիչները պետք է դասընթացն անցնեն Երևան քաղաքում՝ առանց որևէ փոխհատուցման (կացություն, ճանապարհածախս, օրապահիկ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած մեկնաբանություններ

Աջակցության կենտրոնի աշխատակիցների մտահոգությունը՝ Ազգային Ինստիտուտում առանց փոխհատուցման կազմակերպվող հնգօրյա դասընթացներին անհիմն է: Աշխատակիցներին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված գործուղման ծախսեր: Երևանում գործուղման կազմակերպումը նպատակային է նաև այլ հաստատությունների մասնագետների հետ շփման, փորձի փոխանակման տեսանկյունից:

Առաջարկություններ

- Ապահովել երեխաների լիարժեք իրազեկվածությունը Կենտրոնի գործունեության, դրա բնույթի և իրենց իրավունքների վերաբերյալ ինչպես նախքան Կենտրոն գալը, այնպես էլ Կենտրոնում գտնվելիս, այդ թվում՝ տեղեկացնելով այլ հաստատություն հնարավոր տեղափոխման մասին
- Կենտրոնի վերանորոգումն իրականացնել՝ ապահովելով ֆիզիկական պայմանների համապատասխանությունն օրենսդրության պահանջներին՝ առանցքում ունենալով երեխաների բարեկեցությունը
- Կազմակերպել աշխատակազմի պարտադիր ուսուցում՝ ապահովելու բոլոր երեխաների (անկախ սեռից, սոցիալական ծագումից, ծննդից, հաշմանդամությունից) մարդու իրավունքների և արժանապատվության վրա հիմնված խնամքը Կենտրոնում
- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, դպրոցների, կրթության ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վերացնել Կենտրոնի երեխաների նկատմամբ բուլինգի դրսևորումները դպրոցներում
- Ապահովել Կենտրոնի բոլոր աշխատողների՝ դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունը, երաշխավորել սեռական հասունացման և սեռական առողջության վերաբերյալ անհատականացված աշխատանքը երեխաների հետ
- Երաշխավորել Կենտրոնում տրամադրվող հիգիենայի պարագաների որակը և դրանց պատշաճ պահպանումն ու տրամադրումը
- Դադարեցնել Կենտրոնում երեխաների նկատմամբ պատժիչ դաստիարակչական մեթոդների կիրառումը

- Ապահովել աշխատակազմի՝ մասնագիտական այրումից պաշտպանությունը՝ համապատասխան աջակցության շնորհիվ
- Ապահովել պարտադիր վերապատրաստումների մասնակցության անխոչընդոտ հնարավորությունը՝ տրամադրելով կացության, ճանապարհածախսի և այլ անհրաժեշտ փոխհատուցում